23րդ ՏԱՐԻ ԹԻՒ 6373 — 26 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1906 — ԵՐԵՔՇԱԲԹԻ — 23 ԶԻԼ-ԳԱՏԷ 1324 — 8 Janvier 1907 — 23me année № 6373

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
"ԱՐԵՒԵԼՔ" ՕՐԱԹԵՐԹԻ
Կ. ՊՈԼԻՍ, ԳԱԼԱԹԻԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ 80 Ղրշ.
ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ 108 »
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ 35 Ֆրք.
ԹՂԹԱՏԱՐԻ ԾԱԽՍԸ ՄԵՐ ՎՐԱՅ

20 հատ 1 դրուշնոց փուլ
1 մեծ.ի հաշուով կ'ընդունուի

10 ՓԱՐԱ

# Արեւելք

## ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ارهولك
درسعادتده غلطهده ارهولك غزتهسى ادارهخانهسى

DIRECTION
DU JOURNAL ARMÉNIEN
"ARÉVELK"
CONSTANTINOPLE - GALATA

10 PARAS

## ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ
## ԲՆԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բոլոր այն դարերուն մէջ, որոնց թիւը կարելի չէ գիտնալ ստուգիւ, երբ աշխարհի ամէն մասերը իրարու հետ կանոնաւոր յարաբերութիւններ չունէին և գրեթէ իւրաքանչիւրը ինքն իրեն առանձին կ'ապրէր, մանաւանդ երբ եւրոպական քաղաքակրթութեան ազդեցութիւնը տակաւին արեւելեան երկիրներու վրայ չէր տարածուած, Ասիական Թուրքիոյ ընդարձակածաւալ երկիրը կազմող աշխարհը բնութենէ օժտուած ըլլալով բուսային, հանքային և կենդանական հարստութիւններով, կրցած է միշտ ապրիլ իր տեղական միջոցներով, առանց կարօտ ըլլալու դուրսէն գալիք ապրանքներու կամ նախնական նիւթերու։ Անոնց կարօտ չըլլալէն ի զատ՝ ընդհակառակն ինքը արտածութեան բաւական ճոխ վաճառականութիւն մը ունեցած է, դրկելով հրջակայ աշխարհներուն իր աւելորդ բայց արժէքաւոր արտադրութիւնները, թէ՛ նախնական կամ չգործուած վիճակի մէջ և թէ՛ ճարտարագործուելէ վերջը։ Ինչպէս մինչեւ այսօր իսկ խիստ չահուէտ կերպով կ'արտածուին Ասիական Թուրքիոյ գորգերը և զանազան քաղաքներու մէջ պատրաստուած նուրբ մետաքսեղէնները, բրդեղէնները ու բամբակեղէնները, եւայլն։ Իսկ նախնական նիւթերուն խօսքը չըլլար,

[…]

և թէ՛ մւսին։

Եւ ամէնէն էականը սա էր որ նախնական ոչ մէկ նիւթի կարօտութիւն կը քաշէին։ Արմտիք, միս ու իւղ, առատութիւն ու աժանութիւն ունեցած էին անյիշատակ դարերէ ի վեր։ Նոյն իսկ հիմա ծովեզերքներէն 4-5 օր ներսերը և դեռ աւելի մօտ տեղերը հացին օխան

[…]

Այս գործով, ըստ կարգի մէկ մէկի տեղը կը գրաւէին և օտար երկիրներէ ներածման պէտք չէին զգեր։

Ահա թէ բնական ինչ առաւելութիւններով օժտուած երկիրներ են կայսերական ասիական նահանգները որ այնչափ միլիոնաւոր մարդիկ ապրեցուցած են անհամար ժամանակներէ հետէ և կ'ապրեցնեն։

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ

## ՈՒՂԵՒՈՐԱԿԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

Խարբերդի դաշտը կ'իյնայ Մշոյ հիւսիսային արեւմտեան կողմը և կը վերաբերի Բղլի գայմագամութեան. շրջապատուած է Բիւրակնեան լերանց քըղանցքի ծալքերու չըմթայացած դօտիներով. սահմաններն են արեւելքէն ու արեւմտաքէն Անարիա և Քարեր, հիւսիսէն Խօրդու և հարաւէն Գօյնուկ, Մուշէն իբր 20-25 ժամ հեռաւորութեամբ. Չիւթլիկ նշանաւոր գիւղէն կը սկսի մինչ

[…]

ծեն, ինչպէս «վառի կը» (կը վառի), «երթայ կը» (կ'երթայ), «նստի կը» (կը նըստի), եւն.։ Իսկ ան մասնիկով վերջաւորուած գիւղական անուանները արդէն գրաբար լեզուի յոգնակի ձեւ մը ըլլալով, փարսի կամ քրթաց եւս յոգնակի հնչումներն են, ինչպէս Կիւնտէմիրան, Պաղըքան, Տօսան, Սալըքան, Խուլան կամ Գուլան, Խօչան, Լակլական, Աղվէրան, եւայլն։

Մ. Ք. Փ.

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

### 1906 ՏԱՐԻՈՅ
### ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Նոյէ Ֆրայէ Բրէսէի Բարեկեան թղթակցին 1906 Տարւոյն մէջ տեղի ունեցած քաղաքական դէպքերուն վրայ գրած մէկ տեսութենէն կը քաղենք հետեւեալ կարեւոր հատուածները. —

Մարոքի առեւտուրին խնդիրը որ անցեալ տարի ընդհանուր պատերազմի մը պատճառ ըլլալ կը սպառնար, այս տարի դիւանագիտական ձեւակերպութեամբ կարգի դրուեցաւ։ Գերմանիոյ Թելադրու-

[…]

«ԱՐԵՒԵԼՔ»Ի ԹԵՐԹՕՆԸ (23)

ՔԻՒՆ ՏԱՆ

# Գեղանի Կոմսուհիի Մը Արկածները

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ
## ԳԱՅԼԵՐՆ ՈՒ ԳԱՌՆՈՒԿԸ

Ե.

ԶԱԻԿԻՆ ՎՐԷԺԸ

Բամիւէրը խառնչակից կարասիները և ամէն կարգ խուզարկութիւններ կատարեց։ Անտեսելին տախտակամածը յարդարուած էր չեզանելիւն կարմիր աղիւսներով, բայց ցրտութեան ու խոնաւութեան առաջքը առնելու համար ձմեռը յարդէ փսիաթ մը փռած էին։

—Անհաւատալի զարմանալի բան մը, ըսաւ Նաթալի։

[…]

(Շարունակելի)

